ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԻՆՏԵՐԿԱՊ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (Հ.Կ.)
(Հիմնադրվել է 1990թ)
(ՄՇԱԿՈՒՅԹ - ԱՐՎԵՍՏ - ՍՊՈՐՏ - ՏՐԱՆՍՊՈՐՏ)
ՀՀ, 2022 ՎԱՆԱՁՈՐ, Մյասնիկյան փողոց, 3ա

BENEVOLANT CENTRE «INTERKAP» OF ARMENIA (NGO)
(Founded in 1990)
(CHARITY – CULTURE – ART – SPORT – TRANSPORT)
3a, Myasnikyan str., 2022 VANADZOR, ARMENIA

Tel/fax: 00374 91716160
www.interkap.de
interkap1990@yahoo.com

11.06.2018 թ., թիվ 27/29

ՊԱՐՈՆ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ,
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հարգարժան ՊԱՐՈՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ,

Հայտնում ենք Ձեզ, որ մեր կազմակերպության նախաձեռնությամբ Զորավար Անդրանիկ փողոցի սկզբնամասի հրապարակում առաջարկում ենք տեղադրել **ՄԵԾՆ ԶՈՐԱՎԱՐԻ** 7-ից 8 մետրանոց բրոնզաձույլ հուշարձանը:

Վանաձորի քաղաքապետարանում ս/թ մայիսի 12-ին անցկացված մրցույթում ձայների ճնշող մեծամասնությամբ ընտրվեց քանդակագործության մագիստրոս վանաձորցի Գեղամ Բեզջանյանի էսքիզ-մակետի տարբերակը:

Նախագծային աշխատանքները կատարում է Վանաձորի գլխավոր ճարտարապետ Սուրեն Աբովյանը:

Նախաձեռնությունն իրականացնելու անհրաժեշտ գումարը հավաքվում է Հայաստանում ու արտերկրներում ապրող մեր կազմակերպության համակիր-ընկերների, հուշարձանի կառուցման Նախաձեռնող և Աշխատանքային խմբերի անդամների և անհատ բարերար-նվիրատուների կողմից:

Խնդրում ենք Ձեզ աջակցել ծրագրի իրականացմանը՝ ***միայն տեղի հատկացման հարցում***, քանի որ տեղադրման աշխատանքները նախատեսում ենք սկսել ս/թ հուլիսի 1–ից:

Հարգանքներով եւ շնորհակալաբար՝

Նորայր Զուլոյան,
ԻՆՏԵՐԿԱՊ-ի հիմնադիր, նախագահ

Հ.Գ. մեր կազմակերպության գործունեությանը ծանոթացեք http://lori.mtad.am/NGO/ և www.interkap.de կայքերում:

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«11» 06 2018թ.
Մուտք N 079 Գրանցում N 3252

25, rue Micolon
94140 Alfortville, France
tel.: +33 652427211

Wuerttembergischestr., 45
10707 Berlin, F.R.Germany
tel.: +49 1726252342

Լոռու Մարզ

LORU MARZ
Regional newspaper

ISSN 1829-2542

Մարզային լրագիր
Մայիսի 16, 2018 թ., չորեքշաբթի
թիվ 37 (11247)

Ընտրվեց Անդրանիկ Զորավարի արձանի՝ Գեղամ Բեկջանյանի ներկայացրած տարբերակը

Մայիսի 12-ին Վանաձորի համայնքապետարանի փոքր դահլիճում տեղի ունեցավ Զորավար Անդրանիկի արձանի տեղադրմանը նվիրված քննարկում, որին մասնակցում էին Վանաձորի փոխքաղաքապետ Արման Բերնեցյանը, ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը, բաժնի աշխատակիցներ, ճարտարապետներ, նախաձեռնող խմբի անդամներ, մտավորականներ:

Իրենց հեղինակած արձանի մանրակերտն էին ներկայացրել վանաձորցի քանդակագործներ Սարգիս Ղարիբյանը (Սետ), Արամ Մարգարյանը և Գեղամ Բեկջանյանը:

Նախաձեռնության հեղինակ, «Ինտերկապ» բարեգործական կենտրոնի նախագահ Նորայր Զուլոյանը ներկայացրեց մտահղացման պատմությունն ու նվիրատուների պատրաստակամությունը՝ աջակցել, որ Վանաձորում տեղադրվի մեծ զորավարին արժանի արձան:



Սկզբում արձանի երեք տարբերակների հեղինակները ներկայացրին իրենց գործերը: Ապա ծավալվեց քննարկում, որի ժամանակ քանդակների մասին իրենց նկատառումներն ու դիտողությունները ներկայացրին Արման Բերնեցյանը, ՀՀԱՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Մանվել Միկոյանը, «Մշո զարմ» հկ-ի նախագահ Էդվարդ Խլղաթյանը, Վանաձորի քաղաքապետարանի տիկնիկային թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար Սերգեյ Մելիքյանը, Արցախյան պատերազմի մասնակից, մայոր Ռազմիկ Մադարյանը, ճարտարապետները և ուրիշներ:

Կայացավ փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքում Ա. Մարգարյանի ներկայացրած տարբերակի (կիսանդրի) օգտին քվեարկողներ չեղան: Ս. Ղարիբյանի ներկայացրած տարբերակի օգտին քվեարկեցին ներկաներից 5-ը, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի շրջանավարտ, քանդակագործության մագիստրոս Գեղամ Բեկջանյանի տարբերակի օգտին ձայն տվեցին 14-ը:

Շահումյան հրապարակում, որտեղ որոշված է կանգնեցնել արձանը, գովազդային վահանակ է տեղադրված, որի համար երկարաժամկետ պայմանագիր է կնքված:

Որոշվեց դիմել գովազդատու գործարարին և օրենքի սահմաններում չեղյալ համարել պայմանագիրը:

Ն. Զուլոյանը տեղեկացրեց, որ հանգանակությունը շարունակվում է, իսկ նվիրատուների անունները և նվիրաբերած գումարների չափը պարբերաբար կտպագրվեն «Լոռու մարզ» թերթում (արդեն երկու հրապարակում եղել է) և կտեղադրվեն համացանցում:

Սեփ. լրատվություն